


# ԱԶԴԱՐԱՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ՔՈՒԷՅՈՒ ԵՒ ԵՐԶԱԿԱՅԻՑ ՀԱՅՈՑ ԹԵՄԻՆ

P.O.Box: 8157, Salmiyeh 22052- Kuwait. Tel: 965-25614392, Fax: 965-25638312, e-mail: [prelacy@armenianprelacykw.org](mailto:prelacy@armenianprelacykw.org)

ՆՈՐ ԵՐԶԱՆ, Ը. Տարի, Թիւ 340, Ուրբաթ, 01 ՅՈՒՆԻՍ, 2016

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ



The Prime Minister  
State of Kuwait



رئيس مجلس الوزراء  
دولة الكويت

" برقية "

المحترم

المطران / ماسيس زوبويان  
مطران الأرمن الأرثوذكس في دولة الكويت

تحية طيبة وبعد،،،

تلقينا مع الشكر تهنئتكم الكريمة وأسرة مطرانية الأرمن الأرثوذكس في دولة الكويت ودول الجوار بمناسبة حلول شهر رمضان المبارك، سائلين الله تعالى أن يجعل أيامه مباركة على اوطاننا وعلى شعوب العالم كافة.

وإن يسرنا أن نعرب لكم عن خالص تقديرونا لمبادرتكم الطيبة، فإننا نشمن تواصلكم المخلص ومشاعركم الصادقة.

خالص تمنياتنا لكم بدوام الصحة والعافية، ولدول العالم كافة دوام الأمن والاستقرار والرخاء.

مع أطيب التمنيات،،،

جابر المبارك الحمد الصباح  
رئيس مجلس الوزراء  
دولة الكويت



الأحد: 14 رمضان 1437 هـ  
الموافق: 19 يوليو 2016 م

## ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻ ԻՇԽԱՆԻՆ

### Ն.Վ. ՇԷՅԽ ՍԱՊԱՀ ԱԼ ԱՀՄԱՏ ԱԼ ՃԱՊԷՐ ԱԼ ՍԱՊԱՀԻՆ



Ռամատանի առաջին օրերուն Քուէթի պետական բարձրաստիճան ասնաւորութիւնները երկրի աւանդութեան համաձայն ընդունեցին դիւանագիտական, կրօնական եւ ժողովրդային շնորհաւորութիւններ: Ռամատանը գեղեցիկ առիթ մը հանդիսացաւ շնորհաւորելու, մօտէն ծանօթանալու եւ մտերմիկ կապեր հաստատելու պետական աւագանիին հետ: Այս ծիրէն ներս Թեմիս առաջնորդ՝ Գերպ. Տ. Մասիս Ծ. Վրդ. Զօպունեան իր

պատուիրակութեան հետ հանդիպումներ ունեցաւ երկրի խորհրդարանի նախագահին, վարչապետին, զանազան նախարարներու եւ երեսփոխաններու, իսլամ հոգեւոր պետերու ու երեւելի ընտանիքներու հետ:

Սոյն հանդիպումներուն ամենակարեւորը տեղի ունեցաւ Ռամատանի առաջին օրերուն, երբ Առաջնորդ Հայր Սուրբը ընկերակցութեամբ գաղութիս հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Արտակ Քհնյ. Քէհեաւեանին, յարաբերականի ատենապետ՝ Տիար Մարքօ Պապլանեանին եւ Ազգային Վարչութեան անդամ՝ Տիար Ռաֆֆի Արիկեանին այցելեց երկրի Իշխանին՝ Նորին Վսեմութիւն Շէյխ Սապահ Ալ Ահմատ Ալ Ճապեր Ալ Սապահին եւ անոր Գահաժառանգին եւ Ալ Սապահ ընտանիքի անդամներուն Քուէթի հայ համայնքին անունով շնորհաւորեց Ռամատանի ամիսը եւ Իշխանին փոխանցեց արեւշատութեան իր բարեմաղթութիւնները:



Ռամատանի առաջին օրերուն Առաջնորդ Հայր Սուրբը շնորհաւորական նամակներ յղեց երկրի Վսեմաշուք Իշխանին, պետական բարձրաստիճան անձնաւորութիւններու, Քուէթի մօտ հաւատարմագրուած Իսլամ պետութիւններու ղեսպաններուն եւ Իսլամ կրօնապետերու:

Յիշենք նաեւ, որ այս առթիւ առաջնորդ Հայր Սուրբը ստացած է շնորհակալական նամակներ, երկրի գահաժառանգի ու վարչապետի կողմէ, որոնք մեծ ուրախութեամբ ընդունեցին Հայր Սուրբի շնորհաւորանքներն ու բարեմաղթանքները:

**WWW.AZTARAR.COM**

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՕԾՄԱՆ 21-րդ ՏԱՐԵԴԱՐՁԸ  
ՆՇՈՒԵՑԱԻ  
ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՕԹՔՈՎ ՈՒ ԾԱՌԱՅԱԿԱՆ ՈՒՒՏԻ  
ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄՈՎ**

Հայ Եկեղեցւոյ աւանդութեան համաձայն, ամէն տարի Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման տարեդարձին առիթով, հայ եկեղեցիներէն ներս տեղի կ'ունենան Հայրապետական Մաղթանքի արարողութիւններ:



Այս տարի եւս, Արամ Ա. Կաթողիկոսի Հայրապետական ընտրութեան (28 Յունիս 1995) եւ օծման (1 Յուլիս 1995) 21-րդ տարեդարձին առիթով, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ Ս. եւ Անմահ Պատարագի ընթացքին տեղի ունեցաւ Հայրապետական Մաղթանք: Օրուան պատարագիչ Հոգշ. Տ. Պսակ Աբղ. Թեփիրճեան իր քարոզին ընթացքին, անդրադառնալով Վեհափառ Հայրապետին գահակալութեան ըսաւ. «Մեր Սուրբ Աթոռին աղօթելով հայրապետական ազգընտիր հովուապետին առողջութեան եւ առաքելութեան յաջողութեան համար: Վեհափառ Տէ՛ր, որպէս խոնարհագոյն ծառան այս միաբանութեան, թոյլ տուէ՛ք, որ մեր ժողովուրդին սիրեցեալ զաւակներուն սրտին թարգմանը հանդիսանան ու մեր բոլորին աղօթքը խունկի ճամբով բարձրացնեն առ Աստուած: Ի սրտէ կ'աղօթեմ, որ սուրբ հոգւոյ շնորհները այսօր, անգամ մը եւս, հեղու Ձերդ Վեհափառութեան վրայ, որպէսզի Ձեր ճամբով՝ առաւել ծաղկազարդուի Մեծի Տանն Կիլիկիոյ դարաւոր Կաթողիկոսութիւնը»:

Ս. եւ Անմահ պատարագէն ետք, Վեհարանի դահլիճին մէջ, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութեան ուղերձ կարդաց Հոգշ. Տ. Նշան Կրդ. Լախոյեան: Ուղերձին մէջ Հայր Սուրբը ըսաւ. «Վեհափառ Տէր, Սփիւռքի մէջ վերահաստատուած մեր դարաւոր Աթոռին հարիւրամեայ ճիգը կը շարունակուի ձեր հովուական ծաղկեալ մականին, միւռոնած Ս. Աջին ու հաստատակամ քայլերուն առաջնորդութեամբ. այն ճիգը, որ 100 տարիներ առաջ Ծերունագարդ Սահակ Հայրապետին եւ անոր յաջորդած միւս բոլոր հայրապետներուն ճամբով ի գործ դրուեցաւ: Ինչպէս անոնք, նոյնպէս եւ դուք, Լուսաւորչի Ս. Աջը ձեր սրբազան աջին մէջ կենդանացուցած 21 տարիներ շարունակ, զայն տարածեցիք մեր ժողովուրդին գլխին վերէ՝ ի պահպանութիւն հայոց ազգիս. զայն ձօճեցիք այս աշխարհի անարդարութիւններուն դէմ՝ յանուն արդարութեան»:

Այս առիթով, Շիմշիրեան ընտանիքը շնորհաւորելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին ընտրութեան եւ օծման 21-րդ տարեդարձը նուիրեցին Վեհափառ Հայրապետին կիսանդրին, որ յատուկ կերպով պատրաստուած էր վերջին 2 տարիներուն ընթացքին:

Միաբանութեան եւ ներկայ հաւատացեալ ժողովուրդին ներկայութեան, Նորին Սրբութիւնը խօսք առնելով իր շնորհակալութիւնը յայտնեց Աստուծոյ, որ իրեն այս առիթը ընծայած էր անցնող 21 տարիներու ընթացքին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ընդմէջէն ծառայելու մեր եկեղեցւոյ, ժողովուրդին ու հայրենիքին: Վեհափառ Հայրապետը նաեւ յայտնեց, թէ «Հայրապետական Մաղթանքը ծառայական ուխտի վերանորոգումն է, որովհետեւ հայ հոգեւորականը ի՛նչ աստիճանի վրայ ալ գտնուի կեանքին ճամբան ու նպատակը ունի ծառայութիւնը»:

Աւարտին, ներկայ հաւատացեալները աջահամբոյրով ստացան Հայրապետական օրհնութիւն եւ շնորհաւորեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին ընտրութեան եւ օծման 21-րդ տարեդարձը:

ՀԱՅԿԱԿԱՆ

## Ազգային Ժողովը Առաջին Ընթերցումով Ընդունեց Ընտրական Օրենսգիրքին Մեջ Փոփոխութիւններ Կատարելու Նախագիծը



29 Յունիսին Ազգային ժողովը առաջին ընթերցումով ընդունեց կառավարութեան կողմէ ներկայացուած՝ Ընտրական օրենսգիրքին մեջ փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին նախագիծը:

4+4+4 ձեւաչափով բանակցութիւններէ ետք, նշենք, Ընտրական օրենսգիրքին շուրջ փոխհամաձայնութեան մասին

յայտարարութիւն ստորագրուեցաւ, ըստ անոր, ընտրութիւնները ընտրական կէդրոններուն մեջ պիտի նկարահանուին, պիտի ներդրուի մատնահետքերու ելեկտրոնային արձանագրութեան համակարգ, ընտրելու համար պիտի կիրարկուին միայն նոյնականացման քարտեր, իսկ ընտրութիւններուն մասնակցած քաղաքացիներուն ցանկերը պահանջուելու պարագային պիտի տրուին վստահուած անձերու:

29 Յուլիսին տեղի ունեցած քուէարկութեան ընթացքին Հայ ազգային քննկրես (ՀԱԿ) խորհրդարանական խմբակցութեան պատգամաւոր Գագիկ Զհանգիրեան յայտարարած է, որ իրենց խմբակցութիւնը կողմ է այս փոփոխութիւններուն: «Բայց ասիկա չի նշանակեր, որ մենք կողմ ենք ընդհանուր Ընտրական օրենսգիրքին: Չհամաձայնեցուած հարցերը տակաւին շատ են, յատկապէս՝ բաց համամասնական համակարգը», յայտնած է ան:

«Բարգաւաճ Հայաստան» խմբակցութեան ղեկավար Նայիրա Զոհրաբեան եւս յայտարարած է, որ խմբակցութիւնը թեր պիտի քուէարկէ նախագիծին: «Ասիկա միացեալ լուրջ ջանքի եւ աշխատանքի արդիւնք է, եւ եթէ այս քաղաքական համաձայնութեամբ մենք կարենանք լուծել նաեւ զայն իրականացնելու հարցը, ասիկա էապէս լուրջ լծակներ կու տայ մշտապէս կրկնուող հիմնական ընտրակեղծիքներու բարձր մակարդակը գոնէ նուազեցնելու համար: «Բարգաւաճ Հայաստան»-ը կողմ պիտի քուէարկէ», ըսած է Զոհրաբեան:

«Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Ռուբէն Յակոբեան իր կարգին յայտարարած է, որ «եթէ»-ով պայմանաւորուած օրինագիծին չի կրնար թեր քուէարկել. «Ես միշտ կողմ եմ ընտրական գործընթացներու բարելաւման, բայց «եթէ»-ով պայմանաւորուած օրինագիծին ես չեմ կրնար կողմ ըլլալ, ես դեմ պիտի քուէարկեմ»:

Նախագիծին դեմ արտայայտուած է նաեւ ընդդիմադիր պատգամաւոր Խաչատուր Քոքոբէլեան:

## Ռուստամեան. «Ռուս-Թրքական Ցարաբերութիւնները Այլեւ Նոյնը Պիտի Չըլլան»

Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցութեան ղեկավար Արմէն Ռուստամեան չ'ընդունիր այն բնորոշումը, թէ երբ ռուս-թրքական յարաբերութիւնները լարուին կամ բարելաւուին, վնաս են Հայաստանին համար:

«Երկիր»-ին հետ գրոյցի ընթացքին ան նշեց, որ աշխարհի պետութիւնները ունին իրենց շահերը, եւ ամէն փոփոխութեան պարագային, Հայաստան պէտք է վերադասաւորուի, որպէսզի հաւանական բացասական հետեւանքները չէզոքացնէ:

«Թուրքիան վտանգ է Հայաստանի համար, շատոնց յայտնի է: Անկախ անկէ, թէ Թուրքիան Ռուսիոյ հետ ինչպիսի՛ յարաբերութիւններ կ'ունենայ, մեզի համար սպառնալիք է եւ վտանգ, քանի որ չէ հրաժարած իր նոր օսմանակնութեան ռազմավարութենէն: Ասիկա, անկախ այդ վերիվայրումներէն, միշտ պիտի ունենանք մեր արտաքին սկզբունքին մէջ», ըսաւ Ռուստամեան:

Անոր կարծիքով՝ ինչ որ տեղի կ'ունենայ, բնականաբար, ստիպուած քայլ է Թուրքիոյ կողմէ, որովհետեւ այնքան հարցեր կուտակուած են, որ ճնշումները հետզհետէ երկրին վրայ կը մեծնան, եւ ան ստիպուած պէտք է այդ լարուածութեան օճախները մեղմացնէ: Ռուստամեան նշեց, որ Թուրքիոյ կարգախօսն էր՝ ունենալ զերօ հարց դրացիներուն հետ, բայց ունեցաւ զերօ դրացի, եւ այդ պատճառով բնական է, որ կը փորձէ գոնէ հարթել յարաբերութիւնները այն երկիրներուն հետ, որոնց հետ թշնամանքը լուրջ վտանգ կրնայ հանդիսանալ, մանաւանդ որ երկրին մէջ ալ հարցեր կուտակուէր են: Պատգամաւորին կարծիքով՝ Էրտողանի վարչակարգը լուրջ սպառնալիքներ յառաջացուցած է Թուրքիոյ ներքին եւ արտաքին քաղաքականութեան մէջ:

«Այս տրամաբանութեամբ ան այդ քայլը առած է, եւ յայտնի էր, որ այս թշնամանքը յաւերժական պիտի չըլլար», ըսաւ ան՝ աւելցնելով, որ անսպասելի ոչ մէկ բան տեղի ունեցած է, որ մենք հիմա սթափինք ու փորձենք կտրուկ ինչ որ փոփոխութիւններու դիմել, բայց վստահ, որ մենք պէտք է ունենանք մեր հետեւողական քաղաքականութիւնը՝ Թուրքիոյ հետ կապուած, եւ իմանանք, որ այդ պետութիւնը, անկախ ամէն ինչէ, մեծ սպառնալիք է ոչ միայն Հայաստանի, այլեւ շրջանի ու աշխարհի համար, ընդ որում՝ հիմա արդէն ամբողջ աշխարհը այդ կը հասկնայ:

Անդրադառնալով ռուս-թրքական յարաբերութիւններու բարելաւման՝ Ռուստամեան ըսաւ. «Այսպիսի խօսք կայ՝ կոտրուածը ինչքան ալ փակցնես, հետքը նորէն պիտի երեւի: Ուրեմն այն նստուածքը, որ յառաջացաւ այս ընթացքին Ռուսիոյ մէջ, բացասական նստուածք էր եւ իր հետեւանքները պիտի ունենայ»:

«Նոյնը պիտի չըլլայ այլեւս ռուս-թրքական յարաբերութիւններուն մէջ, ինչ եղած է մինչեւ օդանաւի ջախջախման դէպքը, մանաւանդ՝ Էրտողանի վարչակարգի պահպանման պարագային: Բնականոն դառնալ կարելի է, բայց սուր յարաբերութիւնները նորէն կարգաւորուին՝ ոչ», կարծիք յայտնեց Ռուստամեան:

Պատասխանելով այն հարցումին, թէ կապ կը տեսնե՞ք Էրտողանի «ներման հայց»-ին եւ Թուրքիոյ մէջ տեղի ունեցած ահաբեկչութեան միջեւ, պատգամաւորը պատասխանեց, որ կապ չի տեսներ, թէեւ ամէն ինչ կարելի է կապել, բայց ինք կապ չի տեսներ:

**ՀՅԴ-ն Կողմ Հակաօդային Պաշտպանութեան Համաձայնագիրին**

Չորեքշաբթի օր Ազգային ժողովի արտահերթ նիստին ընթացքին կը քննարկուէր Հակաօդային պաշտպանութեան համաձայնագիրի վաւերացման հարցը:

Ելոյթ ունեցաւ Ազգային ժողովի ՀՅԴ խմբակցութեան ղեկավար Արմէն Ռուստամեան:

Անոր խօսքով՝ կայ ոսկի կանոն մը, որ եթէ չունիս այլընտրանք, ամրացո՛ւր ինչ որ ունիս: Անկէ շեղելու պարագային կը փլէս անվտանգութեան համակարգը: Ըստ Ռուստամեանին, մտավարժանքներով պէտք չէ խճճել հարցը, շեղել եւ խեղաթիւրել:

«Ոմանց համար ապրիլեան պատերազմը առիթ էր, որ այս այլընտրանքը չունենալով, զրկուինք մեր ունեցածէն: Քառօրեայ պատերազմը ցոյց տուած է նաեւ այլ բաներ, որ փոխուած է միջազգային իրավիճակը, որ փոխուած են խաղի կանոնները, եւ ով որ ուժեղ է, խաղի կանոնները կը պարտադրէ: Խնդիրը շատ պարզ դրուած է՝ մենք ասով կ'ուժեղանա՞նք, թէ՞ չենք ուժեղանար: Խօսքը պաշտպանութեան մասին է: Ինքնապաշտպանութիւնը որեւէ պետութեան սուրբ իրաւունքն է: Եթէ ձեզի կը թուի, որ երբ մեր վրայ յարձակին, մենք պէտք է ինչ որ մէկուն հարցնենք՝ մեր ինքնապաշտպանութիւնը իրականացնէ՞նք, թէ՞ ոչ, ուրեմն դուք այս աշխարհէն չէք», ըսաւ Ռուստամեան:

Անոր խօսքով՝ պայմանագիրներու միջոցով չէ, որ կը յարձակին, արտակարգ իրավիճակը պայմանագիրներու խախտում է, երբ ձեռքիդ տակ եղած զենքով կը դիմես ինքնապաշտպանութեան: Ապրիլեան պատերազմը ցոյց տուաւ, որ մենք կը դիմենք ինքնապաշտպանութեան եղած զենք ու զինամթերքով՝ առանց ոեւէ մէկուն հարցնելու: Եւ եթէ Հայաստան փամփուշտ չունենայ, միւս զինատեսակները չունենայ, ապա ինչպէ՞ս պիտի պաշտպանուի: Ըստ Ռուստամեանին, բոլորին համար պարզ է, որ Ռուսիոյ հետ ռազմաքաղաքական համագործակցութեամբ կարելի է ապահովել զենք-զինամթերքի առկայութիւնը, քանի որ այլընտրանք չկայ:

Պատգամաւորը համաձայն է այն տեսական հարցադրումին, թէ ինչո՛ւ մինչեւ հիմա Հայաստան այլընտրանք չէր ստեղծած, բայց ասիկա քննարկուելիք հարց է, պէտք է կարենալ բազմապատկել այլընտրանքները: Սակայն այսօր, երբ ամէն օր իրական պատերազմի սպառնալիք կայ, Հայաստան փաստօրէն չունի այլ միջոց, ուստի պէտք չէ դէմ խօսիլ այն բանին, որ կրնայ ամրապնդել պաշտպանական ու անվտանգային աղբիւրները:

«Այո՛, այսօր մենք խնդիր ունինք՝ մեր ռազմավարական գործընկերոջ հետ յարաբերութիւնները բերել այն մակարդակին, որ իրաւապայմանագրային մակարդակն է: Հիմա իրավիճակը տէ՛քստային ֆաքթօ այդ մակարդակէն ցած է: Եւ ատոր մասին պէտք է ըսել՝ ոչ թէ անդադար գանգատելով, այլ պահանջ ներկայացնելով ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսիոյ ու ըսել՝ եղբայր, պայմանագիր կնքէր ենք, ուրեմն եկէք բառ առ բառ, տառ առ տառ պայմանագիրին կէտերը իրականացնենք: Եթէ այս ձեռով հարցը դրուի, շատ խնդիրներ իրենց տեղը կը գտնեն, մենք ալ մեր ընելիքը կ'իմանանք», ըսաւ Արմէն Ռուստամեան՝ չհամաձայնելով բոլոր այն յայտարարութիւններուն, թէ այս համաձայնագիրով Հայաստան կը զիջի իր ինքնուրոյնութիւնը:

Հակաօդային պաշտպանութեան համաձայնագիրը կը կրէ յղում 1995 թուականի համաձայնագիրին, որուն մէջ կ'ըսուի, որ հակաօդային պաշտպանութեան միացեալ իրականացումը կը կատարուի համադրող խորհուրդի մը կողմէ, որուն ղեկավարումը կ'իրականացնէ Ռուսիան: Այդ փաստաթուղթին տակ ստորագրած է 12 պետութիւն, որոնց մէջ Ազրպէյճան եւ Վրաստան:

«1995 թուականի համաձայնագիրը չէ աշխատած, այստեղ կ'ըսուի, որ կողմերը պետք է տեղեկացուին հրթիռային հաւանական վտանգներու մասին, իսկ մենք գիտենք, որ նման կարելիութիւն եղած է, բայց մենք այդ տեղեկութիւնը չենք ունեցած: Այսինքն՝ մենք եղած պայմանագիրները կեանքի կոչելու խնդիր ունինք: Փաստը այն է, որ Ազրպէյճան խախտած է իր իսկ կողմէ ստորագրուած պայմանագիրը՝ յարձակելով այդ պայմանագիրին տակ ստորագրած դրացի երկրի մը վրայ, խախտելով պայմանաւորուածութիւնը», ըսաւ պատգամաւորը՝ աւելցնելով, որ պայմանագիրները ընդհանրապէս լաւ կ'ըլլան, կը մնայ, որ անոնք իրականացուին, չմնան թուղթի վրայ:

Անոր խօսքով՝ Հայաստան պետք է Ռուսիոյ առջեւ դնէ բոլոր կնքուած պայմանագիրները, որ տէր կանգնին այդ պայմանագիրներով նախատեսուած պարտաւորութիւններուն:

Ան աւելցուց, որ Նախիջեւանի մէջ արդէն Թուրքիան մեծցուցած է բանակին թիւը, եւ եթէ այս համաձայնագիրով այդ հատուածի պաշտպանութիւնը կը մեծնայ, ի՞նչ վատ բան կրնայ ըլլալ ատոր մէջ:

Ռուստամեան յայտնեց, որ ՀՅԴ-ն կողմ պիտի քուէարկէ հակաօդային պաշտպանութեան համաձայնագիրին:

## **Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբը Ի Պաշտպանութիւն Կարօ Փայլանին Շարժում Մը Կը Սկսի**

Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը ամերիկահայերուն ու մարդու իրաւունքներու պաշտպաններուն տարածած է յայտարարութիւն մը, որով կոչ կ'ուղղէ այցելելու [anca.org/paylan](http://anca.org/paylan) կայքը ու պահանջելու, որ արտաքին գործոց նախարարութիւնը եւ մարդու իրաւունքներու պաշտպանութեան յառաջատար կազմակերպութիւնները բարձրաձայնեն Թուրքիոյ խորհրդարանի հայ երեսփոխան Կարօ Փայլանի նկատմամբ յարձակումներու եւ հետապնդումներու մասին:

«Բոլոր այն քաղաքացիները, որոնք մտահոգուած են իր հայկական ծագումին եւ տեսակէտները ազատ արտայայտելու պատճառով յարձակումներու ենթարկուած Կարօ Փայլանի՝ Թուրքիոյ խորհրդարանի երեսփոխանի անվտանգութեան համար, կրնան Ամերիկայի Հայ դատի յանձնախումբին ստեղծած յատուկ կայքին միջոցով դիմել արտաքին գործոց նախարարութեան, «Էմնըսթի Ինթըրնէշնըլ» եւ «Հիումըն Ռայթս Ուոչ» կազմակերպութիւններուն եւ անոնց կոչ ուղղել հանդէս գալու Կարօ Փայլանի պաշտպանութեամբ:

«Թուրքիոյ խորհրդարանին ու Սահմանադրական յանձնախումբին մէջ Կարօ Փայլանի վրայ կատարուած յարձակումներուն տեսագրութիւնները հրապարակուած ու ցուցադրուած են բազմաթիւ լրատուամիջոցներով: Անոր անվտանգութեամբ մտահոգուած քաղաքացիները կրնան այս կայքին մէջ դիմել արտաքին գործոց նախարարութեան օգնական քարտուղար Թոմ Մալինովսքիին, «Հիումըն Ռայթս Ուոչ»-ի գործադիր տնօրէն Քեն Ռոթին եւ «Էմնըսթի Ինթըրնէշնըլ – Միացեալ Նահանգներ» ընկերութեան գործադիր տնօրէն Մարկարէթ Հուանկին: Այս երեք պաշտօնէաներուն հասցեագրուած իրենց նամակներով Կարօ Փայլանի անվտանգութեան պաշտպանները կոչ կրնան բարձրաձայնել անոր նկատմամբ ուժգնացող սպառնալիքին ու բռնութիւններուն մասին եւ դատապարտել Փայլանի դէմ ատելութիւն սերմանողները», ըսուած է յայտարարութեան մէջ:



Այս շաբաթ, Ամերիկայի Հայ դատի յանձնախումբը կոչ ուղղած է Թուրքիոյ մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Պասին բարձրաձայնելու Միացեալ Նահանգներու մտահոգութիւնը Կարօ Փայլանի անվտանգութեան վերաբերեալ: 3 մայիսին ուղարկուած նամակով Հայ դատի յանձնախումբի գործադիր տնօրէն Արամ Համբարեան Փայլանը համեմատած է հայ լրագրող Հրանդ Տինքին հետ, որուն 2007-ին օր ցերեկով սպաննէր էին Թուրքիոյ մէջ: «Տինքի սառնասիրտ սպանութենէն առաջ ալ Հայ դատի յանձնախումբը կոչ ուղղած էր Միացեալ Նահանգներուն հրապարակաւ մտահոգութիւն յայտնելու անոր անվտանգութեան գծով: Ցաւօք, ոչ մէկ նման յայտարարութիւն եղաւ: Դատապարտման հրապարակային բառերը հնչեցին միայն անոր մահէն ետք», նշած է Համբարեան:

## **Հռոմի Պապ. «Տարօրինակ Պիտի Ըլլար Հայաստանի Մէջ Ցեղասպանութիւն Բառը Չգործածելը»**



«Հայերու ոչնչացման վերաբերեալ ես այլ բառ չէի գիտեր, բացի ցեղասպանութենէն», այս մասին յայտարարած է Հռոմի Ֆրանչիսկոս պապը Հայաստան կատարած ուղեւորութենէն ետք՝ պատասխանելով լրագրողներու հարցումներուն:

«Արժանքինի մէջ, երբ կը խօսէին հայերու ոչնչացման մասին, միշտ կ'օգտագործէին Ցեղասպանութիւն բառը, եւ Պունտո Այրեսի Մայր տաճարին մէջ մենք խաչքար տեղադրած ենք ի յիշատակ հայերու Ցեղասպանութեան: Ես չէի գիտեր այդ երեւոյթը նկարագրող այլ բառ: Երբ ես եկայ Հռոմ, լսեցի այլ բառակապակցութիւն՝ «Մեծ չարիք» կամ «Մեծ ողբերգութիւն», եւ ինծի կ'ընէին, որ «Ցեղասպանութիւն» բառը վիրաւորական է: Բայց ես միշտ ալ խօսած եմ երեք ցեղասպանութիւններու մասին, որոնք եղած են անցեալ դարուն՝ Հայոց ցեղասպանութիւնը, ապա՝ Հիթլերի իրագործած ցեղասպանութիւնը եւ Ստալինի իրագործած ցեղասպանութիւնը», «Արմէնփրես»-ի հաղորդումով՝ ըսած է Հռոմի պապը:

26 Յունիսին սրբազան քահանայապետը աւարտած է եռօրեայ այցելութիւնը Հայաստան: Աւանդութեան համաձայն, Հռոմ վերադառնալու ճամբուն վրայ Ֆրանչիսկոս պապը օդանաւին մէջ պատասխանած է իրեն ուղեկցող լրագրողներու հարցումներուն: Պապին Ցեղասպանութեան վերաբերեալ հարցում ուղղած են այն առնչութեամբ, որ 24 Յունիսին Հայաստանի նախագահի նստավայրին մէջ Հռոմի կաթողիկէ եկեղեցոյ դեկավարը, շրջանցելով ծրագրուած ելոյթը, երկրորդ անգամ արտասանեց Ցեղասպանութիւն եզրը:

Ան ընդգծած է նաեւ, որ ցեղասպանութիւն մը եւս եղած է Ափրիկէի մէջ, բայց 20-րդ դարուն տեղի ունեցած «երկու մեծ պատերազմներու ուղեծիրին մէջ» երեք ցեղասպանութիւն եղած է:

«Անցեալ տարի, երբ ես կը պատրաստուէի Ս. Պետրոս տաճարին մէջ տեղի ունենալիք յիշատակի ձեռնարկին, տեսայ, որ Ս. Յովհաննէս Պօղոս երկրորդը օգտագործած է այդ բառը, եւ ես զայն կրկնեցի: Ատիկա լաւ չընդունուեցաւ, Թուրքիոյ կառավարութիւնը յայտարարութիւն ըրաւ՝ իր դեսպանը ետ կանչելով Անգարա, որ վերադարձաւ քանի մը ամիս ետք», նշած է սրբազան քահանայապետը:

«Իմ ելոյթիս մէջ այդ բառը չկար, բայց այն բանէն ետք, երբ ես լսեցի Հայաստանի նախագահին ելոյթի կշռոյթը, իմ կողմէս շատ տարօրինակ պիտի հնչէր, եթէ ես չ'ընէի նոյնը», աւելցուցած է Ֆրանչիսկոս պապը:

## Լաւրով Յաջորդ Շաբաթ Կը Հասնի Հայաստան՝ Մասնակցելու ՀԱՊԿ-ի Հանդիպումին

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկեյ Լաւրով յաջորդ շաբաթ պիտի այցելէ Հայաստան՝ մասնակցելու Հաւաքական անվտանգութեան պայմանագիրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) արտաքին գործոց նախարարներու հաւաքին: Այդ մասին Չորեքշաբթի օր հաղորդած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Մարիա Զախարովա՝ մանրամասնելով. «Նախարարները պիտի քննարկեն շրջանային ու միջազգային անվտանգութեան խնդիրները եւ փոխադարձ գործակցութիւնը միջազգային ասպարէզին մէջ»:

### Ղարաբաղեան Տագնապը «Լռութեան Կարիք Ունի»



Ղարաբաղեան տագնապի հարցը «լռութեան կարիք ունի», Չորեքշաբթի օր յայտարարած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան՝ ընդգծելով. «Այժմ այս հարցին վրայ պէտք է աշխատին դիւանագէտներն ու փորձագէտները»:

Անդրադառնալով ռուսական կողմի նախաձեռնութեամբ անցեալ շաբաթ Ս.

Փեթերսպուրկի մէջ տեղի ունեցած Փութին-Ալիեւ-Մարգսեան հանդիպումին՝ Զախարովա ըսած է. «Կարելոր է ձեռք բերուած դրական արդիւնքները չկորսնցնել հանրային հոետորաբանութեան մէջ, այլ պահպանել՝ յստակ քայլեր իրականացնելու համար»: «Կան նիւթեր, որոնք լռութեան կարիք ունին», ընդգծած է բարձրաստիճան դիւանագէտը: «Կարելոր է այնպէս ընել, որ տագնապի լուծումը տեղափոխուի յստակ, իրական հարթութիւն», ըսած է Մարիա Զախարովա:

## Նախագահ Սերժ Սարգսեան Ցաւակցական Հեռագիր Յղած Է Թուրքիոյ Նախագահին

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան 29 Յունիսին ցաւակցական հեռագիր յղած է Թուրքիոյ Հանրապետութեան նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանին՝ 28 Յունիսին Պոլսոյ մէջ տեղի ունեցած ահաբեկչական գործողութեան առիթով, որ քանի մը տասնեակ սպաննուած եւ հարիւրէ աւելի վիրաւորներ պատճառած էր:

Հայաստանի նախագահի աշխատակազմի հասարակութեան եւ տեղեկատուութեան միջոցներու հետ կապերու վարչութենէն յայտնած են, որ Հայաստանի նախագահը խստօրէն դատապարտած է այդ ահաբեկչական գործողութիւնը, խորին ցաւակցութիւն յայտնած է սպաննուածներու հարազատներուն, իսկ վիրաւորներուն շուտափոյթ ապաքինում մատրթած:

Իր կարգին, Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը դատապարտած է այս ահաբեկչական գործողութիւնը: Նախարարութիւնը «Թուրքիոյ»-ի իր էջին վրայ կատարուած գրառումի մը մէջ կը նշէ. «Մենք կը դատապարտենք սարսափելի ահաբեկչական յարձակումը Պոլսոյ օդակայանին մէջ: Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք սպաննուածներու ընտանիքներուն»:

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ**

**Փուֆին-Էրտողան Հեռաձայնային Հաղորդակցություն.  
Ռուսիա Եւ Թուրքիա Համաձայնեցան Բնականոնացնելու  
Երկկողմանի Ցարաբերությունները**

Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փուֆին Չորեքշաբթի օր կէսօրուան ժամը 12:00-ին հեռաձայնային հաղորդակցութիւն մը ունեցաւ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի հետ:



45 վայրկեան տեւողութեամբ գրոյցէն ետք Էրտողանի գրասենեակը հաղորդագրութիւն մը հրապարակելով յայտնեց. «Մեր նախագահն ու Փուֆինը՝ Ռուսիոյ դաշնակցութեան նախագահը, շէշտեցին Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ յարաբերութիւնները բնականոնացնելու կարելորութիւնը»: Նախագահական պալատէն աղբիւրներ նշեցին, որ հեռաձայնային հաղորդակցութիւնը «դրական ու արդիւնաւէտ էր»:

Հաղորդագրութիւնը նշեց, որ երկկողմանի յարաբերութիւնները վերակենդանացնելու համար պէտք էղած քայլերը առնելու կարելորութենէն բացի երկու նախագահները նաեւ նշած են շրջանային, քաղաքական, տնտեսական եւ մարդասիրական ճգնաժամերու շուրջ գործակցութեան կարելորութիւնը:

«Երկու ղեկավարները վճռականութիւն յայտնած են թէ՛ վերականգնելու իրենց փոխադարձ յարաբերութիւնը, թէ՛ ալ պայքարելու ահաբեկչութեան դէմ», կը նշէ հաղորդագրութիւնը՝ աւելցնելով. «Անոնք նաեւ համաձայնեցան անձամբ հանդիպելու»:

Ըստ հաղորդագրութեան, Փուֆին նաեւ դատապարտած է Պոլսոյ «Աթաթուրք» օդակայանին դէմ կատարուած յարձակումը: Քրեմլիի մամլոյ ծառայութիւնը իր կարգին հաղորդեց, որ Փուֆին Ռուսիոյ կառավարութեան անդամներուն հետ խորհրդակցութիւններու ընթացքին ամփոփած է Էրտողանի հետ հեռաձայնային հաղորդակցութեան արդիւնքները եւ ըսած. «Թուրքիոյ նախագահն՝ մեզի հասցեագրած նամակէն ետք որոշում տուած է թուրք գործընկերներու հետ յարաբերութիւններու բնականոնացման հոլովոյթ սկսիլ: Եւ ես հեռաձայնային հաղորդակցութեան սկիզբը, ի հարկէ, ցուակցութիւն յայտնեցի երկրի նախագահին, թուրք ժողովուրդին դէմ Պոլսոյ մէջ կատարուած ահաբեկչական գործողութեան առիթով»:

«Անդրադառնալով մեր երկկողմանի յարաբերութիւններուն՝ պիտի փափաքէի սկսիլ զբօսաշրջութեան հարցերէն, թէեւ անիկա կը հնչէ ահաբեկչական տարրերու աշխուժանալու լոյսին տակ... Բայց եւ այնպէս, մենք կը վերցնենք այդ մարզին մէջ վարչական սահմանափակումները», ըսած է Փուֆին՝ աւելցնելով. «Եւ կը խնդրեմ Ռուսիոյ կառավարութենէն՝ Թուրքիոյ հետ առեւտրատնտեսական կապերու բնականոնացման հոլովոյթի սկսիլ»:

Ան դիմելով Տմիթրի Մետվետեւին ըսած է. «Տմիթրի Անաթուլեիչ, կը խնդրեմ ձեզմէ այդ կապակցութեամբ առաջարկներ պատրաստել արժէչափային-իրաւական հիմքի փոփոխութեան վերաբերեալ»:

Ռուսիոյ նախագահը յայտնած է, որ Էրտողան իրեն հաւաստած է, որ «Թուրքիոյ ղեկավարութիւնը իրմէ կախեալ ամէն բան կ'ընէ, որպէսզի ապահովուի մեր քաղաքացիներուն անվտանգութիւնը Թուրքիոյ Հանրապետութեան տարածքին»:

Փութին եւ Էրտողան ընդգծած են ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ համագործակցութեան աշխուժացման անհրաժեշտութիւնը: Փութին յոյս յայտնած է, որ Թուրքիոյ՝ ռուս օդաչուի սպանութեամբ մեղադրուող քաղաքացիին նկատմամբ դատաքննութիւնը անկողմնակալ ըլլայ:

Փութին եւ Էրտողան համաձայնած են քննարկել մօտալուտ անձնական հանդիպում ունենալու կարելիութիւնը: Համաձայնութիւն գոյացած է, որ երկու երկիրներու արտաքին գործոց նախարարները 1 Յուլիսին հանդիպում ունենան Սոչիի մէջ Սեւծովեան տնտեսական համագործակցութեան կազմակերպութեան արտաքին գործոց նախարարներու խորհուրդի նիստին ընթացքին: «Այդ հանդիպումին պիտի քննարկուին թէ՛ շրջանի կացութիւնը՝ սուրիական տագնապի լուծման շեշտադրումով, թէ՛ ալ ռուս-թրքական կապերու հետագայ զարգացման հարցերը», ըսուած է Քրեմլինի մամուլայ ծառայութեան հաղորդագրութեան մէջ:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկեյ Լաւրով Չորեքշաբթի օր յայտնեց. «Կը կարծեմ, որ Մոսկուան եւ Անգարան պիտի վերսկսին Սուրիոյ տագնապի լուծման ուղղութեամբ աշխատանքը»:

Միւս կողմէ, շարք մը ռուս քաղաքացիներ ուղղուեցան Մոսկուայի մէջ Թուրքիոյ դեսպանատան շէնք՝ Պոլսոյ օդակայանի գոհերուն ի յիշատակ ծաղիկներ դնելու համար: Թրքական դեսպանատան պաշտօնատարները երախտագիտութիւն յայտնեցին ռուս քաղաքացիներուն:

Մինչ այդ, Ռուսիոյ Դաշնակցային խորհուրդի միջազգային յարաբերութիւններու յանձնախումբի նախագահ Քոնսթանթին Քոսաչով Դիմատետրի իր էջին վրայ գրեց, որ Պոլսոյ օդակայանին մէջ գործուած պայթումները Ռուսիոյ եւ Իսրայէլի հետ յարաբերութիւնները կարգաւորելու Թուրքիոյ իշխանութիւններու փորձերուն դէմ են:

Ծերակուտականին կարծիքով՝ ՏԱՀԵՇ-ի զինեալներու հաւանական առնչութեան մասին Թուրքիոյ իշխանութիւններուն վարկածը առաւել հաւանական կը թուի: «Անոնք քիրտերը չեն, որոնցմէ կը գոլշանան Անգարայի մէջ: Ուստի աւելի ակնյայտ է ահաբեկիչներու այս կամ այն որբէւ օժանդակութեան՝ Թուրքիոյ քայլերու վտանգաւորութիւնը, ներառեալ քարիւղի գնումը կամ բուժման, վերականգնման կամ ալ մարգումներու համար անոնց կարելիութիւններու տրամադրումը», ընդգծած է Քոսաչով:

«Ահաբեկչական գործողութիւնը բացայայտօրէն ուղղուած է Ռուսիոյ եւ Իսրայէլի հետ յարաբերութիւնները կարգաւորելու Թուրքիոյ ղեկավարութեան փորձերուն դէմ», ըսած է ան՝ աւելցնելով. «Թուրքիոյ, դատելով ըստ ամենայնի, կը նախագգուշացնեն, որ ան չմասնակցի ստեղծուող միասնական հակաահաբեկչական ճակատին»:

**Իսրայէլի Նախարարաց Խորհուրդը Վաւերացուց  
Թուրքիոյ Հետ Յարաբերութիւններու Բնականոնացման  
Համաձայնագիրը**

Իսրայէլեան «Հաարեց» օրաթերթի կայքը կը հաղորդէ, որ Իսրայէլի անվտանգութեան հարցերով նախարարաց սեղմ խորհուրդը 7 թեր եւ 3 դէմ քուէներով վաւերացուցած է Թուրքիոյ հետ

յարաբերություններու կարգաւորման համաձայնագիրը: Դեմ քուէարկած են Իսրայէլի պաշտպանութեան նախարար Աւիկտոր Լիպլըրման, կրթութեան նախարար Նաֆթալի Պենետ եւ արդարադատութեան նախարար Այելէթ Շէքետ:

Լիպլըրման քննարկումներուն միայն կիսուն մասնակցած եւ մեկնելէ ետք ձգած է գրութիւն մը, որուն մէջ յայտնած է համաձայնագիրին դէմ ըլլալու մասին: Միւս երկու նախարարները «Հաարեց»-ին յայտնած են, որ քննարկումները տեսած են աւելի քան չորս ժամ, եւ նիստը եղած է նախարարաց խորհուրդի ամենէն լուրջ եւ խորքային նիստերէն մէկը:

Երկու նախարարներ, որոնք չեն ուզած իրենց անունը նշել, «Հաարեց»-ին յայտնած են, որ համաձայնագիրը կը բաղկանայ երեք էջերէ: Մէկ էջը կը վերաբերի հատուցման թղթածրարին, իսկ միւս երկուքը կը բովանդակեն երկու երկիրներուն միջեւ յարաբերություններու կարգաւորման մանրամասնությունները:

## **Թուրքիա Պատրաստակամութիւն Կը Յայտնէ Եգիպտոսի Հետ Յարաբերությունները Բնականոնացնելու**

«Հիւրիդէթ Տէյի Նիուզ» կը հաղորդէ, որ Թուրքիոյ վարչապետ Պինարի Երլտըրըմ 27 Յունիսին պետական «Թ.Ռ.Թ.Հապեր» պատկերասփիւռի կայանին հետ հարցազրոյցի մը ընթացքին յայտարարած է. «Եգիպտոսի հետ մեր տնտեսական յարաբերությունները բարելաւելուն դիմաց որեւէ արգելք չկայ: Նախարարական մակարդակի այցելությունները կրնան սկսիլ»:

Պատասխանելով Եգիպտոսի հետ յարաբերություններու բնականոնացման վերաբերեալ սպասումներու մասին հարցումին՝ Երլտըրըմ նախ եւ առաջ նշած է, որ Եգիպտոսի հարցը «շատ յստակ է»:

«(Եգիպտոսի մէջ) ժողովրդավարութիւնը յեղաշրջումի ենթարկուած է: Ժողովրդավարութիւնը հարուած մը ստացաւ: Պրն. Մուրսի, որ իր պաշտօնը ընտրություններու ճամբով ստացաւ, յեղաշրջումի մը ճամբով հեռացուեցաւ իր պաշտօնէն», ըսած է ան:

«Պրն. նախագահը (Էրտողան) սկիզբէն աշխարհին յայտնած է, որ ասիկա յեղաշրջում մըն է, եւ մենք երբեք այս ձեռով փոփոխություն մը պիտի չընդունինք: Ասիկա հարցին մէկ կողմն է: Ատիկա մէկ կողմ ձգենք, սակայն միւս կողմէ կեանքը կը շարունակուի», յայտնած է Երլտըրըմ՝ նշելով, որ երկու երկիրները կ'ապրին նոյն շրջանին մէջ եւ իրարու պէտք ունին:

«Մեր նաւերը դէպի Կարմիր ծով կը նաւարկեն Սուեզի նեղուցին ճամբով եւ այդտեղէն (Սէուտական) Արաբիա, Յորդանան, Եմեն եւ Ափրիկէի արեւելք կը մեկնին: Ուստի չենք կրնար մեր յարաբերությունները խզել նոյնիսկ եթէ ասիկա ուզենք, որովհետեւ աշխարհագրական կապ մը եւ սերտ կապեր ունինք: Անկախ վարչակարգին փոփոխութեան ձեւէն եւ կատարուած անարդար պնդումներէն ու ու պատիժներէն, մասնաւորաբար Մուրսիի եւ իր խումբին պաշտօնանկ ըլլալէն ետք, պատճառ չկայ, որ տնտեսական յարաբերությունները չբարելաւուին: Մեր գործարարներն ու ներդրողները կրնան փոխադարձաբար շարունակել իրենց ներդրումները բարելաւել, եւ այդպիսով թերեւս ապագային բնականոնացման համար յարմար ենթահող կրնայ պատրաստուիլ», ըսած է ան:

Եգիպտոսի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Ահմետ Ապու Ջէյթ յայտնեց, որ Թուրքիոյ հետ յարաբերություններու բնականոնացումը կախեալ է Անգարայի կողմէ Եգիպտոսի ժողովուրդի կամքի ճանաչումէն:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

## Պետական Ու Անձնական Մակարդակի Պարտություն Մը

Թուրքիոյ վարչապետ Պինալի Երլարը 24 մայիս 2016-ին իր պաշտօնը ստանձնելէն քանի մը օր ետք յայտարարեց, որ Թուրքիան «կարիքը ունի աւելցնելու իր բարեկամները եւ նուազեցնելու թշնամիները»՝ աւելցնելով. «Իսրայէլ, Սուրիա, Ռուսիա, Եգիպտոս... Մեւ ծովն ու Միջերկրականը շրջապատող այս երկիրներուն հետ չի կրնար որեւէ մնայուն թշնամութիւն ըլլալ»: Մէկ ամիս ետք, Թուրքիան արդէն այդ ուղղութեամբ առաւ գործնական 2 քայլեր, առաջինը՝ Իսրայէլի, իսկ երկրորդը՝ Ռուսիոյ ուղղութեամբ: Անգարա մայիս 2010-էն՝ «Մաւի Մարմարա»-ի դէպքէն ի վեր Իսրայէլի հետ սառեցուած յարաբերութիւնները բնականոնացնելու համաձայնագիր մը ստորագրեց Թէլ Աւիւի հետ, ապա նոյեմբեր 2015-էն՝ Սուրիոյ վերեւ ռուսական «Սու-24» ուժաձիգի վար առնուելուն դէպքէն ի վեր լարուած ռուս-թրքական յարաբերութիւնները բնականոնացնելու համար նախագահի մակարդակով նամակ մը յղեց Փութինին: Այդ նամակը մէկ շաբթուան մէջ Էրտողանի 2-րդ նամակն էր Փութինին, սակայն այս անգամ «ներումի հայց» մը կը բովանդակէր:

Յստակ է, որ Թուրքիոյ արտաքին քաղաքականութիւնը դարձած է նուազ գաղափարապաշտական եւ առաւել գործնապաշտական: Այդ քաղաքականութեան մէջ գաղափարապաշտական մօտեցումները կը յամենան, վկայ՝ Եգիպտոսի նկատմամբ Անգարայի կեցուածքը, սակայն Իսրայէլի եւ Ռուսիոյ նկատմամբ կատարուած քայլերը Թուրքիոյ՝ իր շուրջ ստեղծած մեկուսացման օղակը փշրելու նախաձեռնութիւններ են: Արտաքին քաղաքականութեան մէջ այս շրջադարձը բնականաբար կարիքը ունէր գոհի մը: Այդ գոհը դարձաւ նախկին վարչապետ Ահմեթ Տաւրթօղլուն, որուն ուսերուն այժմ (անարդարօրէն) կը բեռցուի Թուրքիոյ միջազգային ու շրջանային մեկուսացման մեղքը:


Թուրքիոյ արտաքին նոր քաղաքականութեան առաջնահերթութեանց մէջ Իսրայէլի հետ յարաբերութիւններու վերականգնումը ամենէն դիւրինն էր, որովհետեւ երկու երկիրներուն միջեւ գոյութիւն ունին գործակցութեան աւանդութիւն մը եւ հասարակաց շահեր, օրինակ՝ Սուրիոյ վարչակարգին, Իրանի եւ Հրգպալլայի վերաբերող հարցերուն մէջ: Աւելի՛ն, Իսրայէլի հետ հակադրութիւնը կորսնցուցած է արաբական աշխարհին մէջ իր շահաւետութիւնն ու հմայքը՝ Սուրիոյ եւ Եգիպտոսի նկատմամբ Թուրքիոյ վարած քաղաքականութեան պատճառով:

Յստակ է, որ համաձայնութեան ստորագրումով Թուրքիան ու անոր նախագահը Իսրայէլի հետ իրենց գօտեմարտին մէջ կրեցին պարտութիւն մը: «Իսրայէլը միջազգային գետնի վրայ կատարելապէս պիտի մեկուսացնենք»-ի, «անոնք շատ լաւ գիտեն ինչպէս սպաննել»-ի, «Իսրայէլ Կազայի մէջ ցեղային մաքրագործում կը կատարէ»-ի եւ «Իսրայէլ Կազայի մէջ իր ոճիրներուն համար հաշուետուութեան պիտի կանչուի»-ի նման յայտարարութիւններ կատարելէ ետք, Թուրքիոյ իշխանութիւնները ստիպուեցան երկկողմանի յարաբերութիւնները վերականգնել՝ առանց Կազայի շրջափակման ջնջման ապահովման: Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիահու 2013-ին արդէն ներում հայցած էր «Մաւի Մարմարա»-ի վրայ թուրք գործիչներուն սպանութեան համար եւ ընդունած հատուցում կատարել, սակայն Իսրայէլի հետ յարաբերութիւնները բնականոնացնելու համար Թուրքիոյ 3-րդ նախապայմանը՝ Կազայի շրջափակման ջնջումը, կատարելապէս անընդունելի էր Իսրայէլի համար: 3 տարի ետք, Անգարա ի վերջոյ ընդունեց Կազայի մարդասիրական օժանդակութիւն մատակարարելու համար օգտագործել իսրայէլեան Աշտոտ նաւահանգիստը, առաջարկ մը, որ Թէլ Աւիւ արդէն «Մաւի Մարմարա»-ի միջադէպէն առաջ ներկայացուցած էր Անգարային: Էրտողան չկրցաւ զիջում պարտադրել եւ մեկուսացնել Իսրայէլը, որ շարունակեց իր յարաբերութիւնները Թուրքիոյ «փոքր եղբօր»՝ Ազրպէյճանի, ինչպէս նաեւ Եգիպտոսի, Կիպրոսի, Յունաստանի եւ այլ երկիրներու հետ: Իր երկիրն էր, որ մեկուսացաւ, եւ «Սուլթան»-ը ստիպուեցաւ ներումի հայցի եւ 20 միլիոն տոլար հատուցման դիմաց վերականգնել յարաբերութիւնները անոր հետ: Իրողութիւն մը, որուն ի տես Թուրքիոյ գլխաւոր ընդդիմադիր Հանրապետական Ժողովուրդի կուսակցութեան ղեկավար Քեմալ Քըլըճտարօղլու կատարեց հետեւեալ դիպուկ յայտարարութիւնը. «Սկիզբը առիծի պէս մոնչաց, իսկ հիմա ալ կատուի պէս կը մլաւէ»:

ԼՈՒՐԵՐ ԳԱՂՈՒԹՆԵՐԷՆ

**Շքանշանի Յանձնում Տոքթ. Ներսէս Սարգիսեանին**

24 Յունիսին Հալէպի մէջ Հայաստանի գլխաւոր հիւպատոսութեան մէջ տեղի ունեցաւ շքանշանի տուչութեան արարողութիւն:




Հայաստանի նախագահին կողմէ Հայաստանի Հանրապետութեան տօնին առիթով, հայրենիք-սփիւռք կապերուն զարգացման իր ունեցած նպաստին, ինչպէս նաեւ հայապահպանման գործին մէջ իր բերած ներդրումին համար տոքթ. Ներսէս Սարգիսեանին շնորհուեցաւ «Մխիթար Հերացի» շքանշանը, զոր անոր յանձնեց Հալէպի մէջ Հայաստանի գլխաւոր հիւպատոս Տիգրան Գեորգեան:

Տ. Գեորգեան իր ողջոյնի խօսքին մէջ շնորհաւորեց տոքթ. Ներսէս Սարգիսեանը՝ յաջողութիւն մաղթելով անոր իր

հայրենանուէր եւ ազգանուէր հետազայ գործունէութեան մէջ:

Իր կարգին, տոքթ. Ներսէս Սարգիսեան շնորհակալութիւն յայտնեց այս բարձր պարգեւին եւ ջերմ ընդունելութեան համար՝ նշելով, որ իրեն համար կրկնակի պատիւ է շքանշանը ստանալ Հալէպի մէջ Հայաստանի գլխաւոր հիւպատոսութենէն ներս, որ պատերազմական այս ծանր պայմաններուն մէջ շարունակելով իր աշխատանքը՝ անգնահատելի ծառայութիւններ կը մատուցէ սուրիահայութեան, ի մասնաւորի՝ հալէպահայութեան:

**Լոյս Տեսաւ Լեւոն Շառոյեանի Նոր Գիրքը**



Վերջերս Հալէպի «Ոսկետառ» տպարանէն լոյս տեսաւ հալէպաբնակ Լեւոն Շառոյեանի նոր գիրքը՝ «Դեգերումներ հայ գիրի եւ պատմութեան գետեզրին» խորագիրը կրող:

Հատորը հրատարակուած է Բերիոյ հայոց թեմի «Այգ» մատենաշարի ծիրին մէջ՝ որպէս այդ շարքին 20-րդ թիւը: Գիրքը ծաւալուն ու պատկերազարդ է եւ կը բաղկանայ 320 էջեր:

Հատորը կը բովանդակէ զոյգ նախաբաններ.

Բերիոյ թեմի առաջնորդ Շահան արք. Սարգիսեանի եւ «Մարմարա»-ի իմբագրապետ Ռոպէր Հատտէճեանի կողմէ:

Այս նոր գիրքով հեղինակը անցում մը կը կատարէ տպաւորապաշտ գրականութենէն դէպի գրավերլուծական աշխարհ: Շառոյեան վարպետ գրավերլուծող մըն է, որ կը սիրէ ոգեկոչել հայ մշակոյթի մեծ ու երախտարժան դէմքեր՝ նորութիւններ յայտնաբերելով անոնց կեանքին ու վաստակին մէջ:

## Հայկական Միջնակարգ Նոր Վարժարանի Մը Բացումը



Սուրբ Մեսրոպ-Արապեան դպրոցական համալիրի խնամակալ մարմինը կը տեղեկացնէ, թէ այս տարուան դպրոցական վերամուտին՝ սեպտեմբերին, բացումը պիտի կատարուի Գեորգ Արապեան միջնակարգ վարժարանին, Ալֆորվիլի Սուրբ Մեսրոպ-Արապեան դպրոցական համալիրի շրջանակին մէջ, որ կը հանդիսանայ առաջին հայկական

միջնակարգ վարժարանը 1987 թուականին տեղի ունեցած Մարսելի Համազգայինի բացումէն ի վեր:

Սոյն նախաձեռնութիւնը սկսաւ 2011-ին՝ շնորհիւ Սուրբ Մեսրոպ վարժարանի մանկապարտէզի եւ նախակրթարանի աշակերտութեան ծնողաց վճարակամութեան:

Յայտնենք, որ Սուրբ Մեսրոպ վարժարանը հիմնուած է 15 սեպտեմբեր 1978-ին, Ալֆորվիլի մէջ, ուր Ցեղասպանութենէն վերապրածներու գաղթէն ի վեր հայկական հոծ համայնք մը կ'ապրի:

### «Մենք Ենք Արցախը» Թեմայով Ձեռնարկ

29 մայիսին, Փուշքինօ շրջանի հայ համայնքին մէջ տեղի ունեցաւ «Մենք Ենք Արցախը» խորագիրով ձեռնարկ մը, որ նուիրուած էր արցախեան պատերազմին զոհուած հայ հերոսներուն, մայիսեան յաղթանակներուն, Հայաստանի Ա. Հանրապետութեան անկախութեան:



Ձեռնարկի ընթացքին ելոյթ ունեցան «Արգիշտ» ժողովրդական պարային համոյթը, «Արգիշտ» հայկական միօրեայ դպրոցի ժողովրդական գործիքներու ուսուցիչ Աւետիս Մանուկեան եւ նոյն դպրոցի սաները:

Այնուհետեւ դպրոցի տնօրէն Ազնիւ Պարոնեան յանձնեց վկայականներ: Իր ելոյթին մէջ Պարոնեան շնորհակալութիւն յայտնեց՝ ռուս ժողովուրդին, սփիւռքի նախարարութեան, ուսուցիչներուն, ծնողներուն եւ աշակերտներուն:

Դպրոցի սաները իրենց երախտագիտութիւնը յայտնեցին «Արգիշտ» հայ համայնքին, հայկական դպրոցի տնօրէնութեան եւ ուսուցչական անձնակազմին, որոնց եռանդին ու ջանքերուն շնորհիւ իրենք կրցած են օտար հողի վրայ ստրվիլ հայերէն գրել, կարդալ եւ հայեցի դաստիարակութիւն ստանալ:

Ձեռնարկի աւարտին Ազնիւ Պարոնեան շնորհակալագիրներ յանձնեց դպրոցի սաներու ծնողներուն եւ համայնքի հայապահպանման գործի նուիրեալներուն:



## ՀՄԸՄ-ի Փրովիտընսի Մասնաճիւղի 35-Ամեակի Տօնակատարութիւն



4 Յունիսին Սուանգիի «Վինըս տը մայլօ» ճաշարանին մէջ նշուեցաւ ՀՄԸՄ-ի Փրովիտընսի մասնաճիւղի հիմնադրութեան 35-ամեակը:

Վարչութեան անունով Սարգիս Դարբինեան արտասանեց մասնաճիւղի շնորհաւորական խօսքը՝ երախտագիտութիւն յայտնելով բոլոր հիմնադիրներուն, նաեւ՝ անցեալի եւ ներկայ նուիրեալ անդամներուն, որմէ ետք ան յատուկ յուշանուէրներով պատուեց բոլոր

այն վարչականները, որոնք վարչութեան կազմին մէջ վարած են զանազան պաշտօններ՝ երկարատեւ տարիներու ընթացքին:

Սրբոց Վարդանանց եկեղեցոյ հովիւ Կոմիտաս քինյ. Պաղսարեան իր պատգամով գովքը հիւսեց ՀՄԸՄ-ի հիմնադիրներուն, անդամներուն եւ համակիրներուն, որոնց 35 տարիներու տքնաջան աշխատանքին շնորհիւ այսօր Փրովիտընսի գաղութը կը վայելէ սկաւառներու գործակցութիւնը գաղութի բոլոր մարզերուն մէջ, ինչպէս նաեւ՝ եկեղեցոյ խորանին վրայ:

Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային վարչութեան անդամ Վիգէն Խաչատուրեան իր կարգին շնորհաւորեց Փրովիտընսի մասնաճիւղը, որուն անդամներու անսակարկ նուիրումին շնորհիւ 35 տարիներ առաջ հիմնադիրներու կողմէ ցանուած հունտերը արդիւնաբեր դարձան: Ապա Շրջանային վարչութեան կողմէ «Ծառայութեան շքանշան»-ով պատուեց մասնաճիւղի հիմնադիր անդամներէն Ռոստոմ Ճաւահիրճեանը, Սարգիս Եփրեմեանը, Սարգիս Մինասեանը եւ Յակոբ Խաչատուրեանը:

Գործադրուեցաւ նաեւ զեղարուեստական յայտագիր, որուն ընթացքին ցուցադրուեցաւ քաղիֆորնիաբնակ ՀՄԸՄ-ի Փրովիտընսի մասնաճիւղի նախկին անդամ եւ սկաւառ Յարութ Առաքելեանի կողմէ պատրաստուած սահիկներու հաւաքածոն, ուր ներկայացուած էր անցնող 35 տարիներու մասնաճիւղին յաջողութիւնները:

## Նշուեցաւ «Մասիս» Շաբաթաթերթի 35-Ամեակը



4 Յունիսին Իրանահայ միութեան սրահին մէջ նշուեցաւ «Մասիս» շաբաթաթերթի հիմնադրութեան 35-ամեակը, եւ այս առթիւ պատուոյ գիրեր յանձնուեցան թերթի գոյատեւման իրենց նպաստը բերած՝ Յովհաննէս Հանէսեանին (յետմահու), Նազարէթ Գեւորեանին եւ տոքթ. Արշակ Գազանճեանին:

Օրուան հանդիսավար «Նոր սերունդ» մշակութային միութեան ատենապետ եւ

«Մասիս»-ի խմբագրական կազմի անդամ Յարութ Տեր Դաւիթեան իր բացման խօսքին մէջ անդրադարձաւ թերթի 35-ամեայ ուղիին, առաքելութեան եւ ընդհանրապէս հայ մամուլի դերին ու կարեւորութեան: Ապա կատարուեցաւ պատուոյ գիրերու յանձնում:

Հայաստանի հիւպատոս Վալերի Մկրտումեան իր կարգին շնորհաւորեց «Մասիս» շաբաթաթերթի 35-ամեակը եւ անդրադարձաւ ամբողջ հայութեան միասնական ուժերով Հայաստանի եւ Արցախի հզօրացման համար առաջ տարուող քաղաքականութեան:

Թեմի առաջնորդ Յովնան արք. Տերտէրեան ելոյթ ունենալով՝ գնահատեց հայ մամուլը եւ անոր մեծ դերը հանրութեան կեանքէն ներս: Գործադրուեցաւ նաեւ զեղարուեստական յայտագիր:

Այս առթիւ կատարուեցան աւելի քան 40 հազար տոլարի նուիրատուութիւններ:

## **Հանդիպում Մէրանուհի Գեղամեանի Հետ**



Վերջերս Քենսինկթօնի «Հայ տան» մէջ տեղի ունեցաւ հանդիպում-երեկոյ գրող, հրապարակախօս, լրագրող, արուեստաբան Լրագրողներու եւ գրողներու միութեան անդամ, սփիւռքի նախարարութեան մամուլի խօսնակ Մէրանուհի Գեղամեանի հետ:

Օրուան բանախօս լրագրող Սեդա Անանեան ներկայացուց Ս. Գեղամեանի ստեղծագործական եւ բեղմնաւոր աշխատանքային ուղին, անոր ձեռքբերումները, աւելի քան 15

հրատարակած գիրքերը, թերթերու եւ ամսագիրներու մէջ անոր գրած յօդուածները, հանդիպումներն ու հարցազրոյցները մեծանուն մտաւորականներու, արուեստի ու մշակոյթի գործիչներու հետ եւ այլն:

Մէրանուհի Գեղամեանի սփիւռքի եւ սփիւռքահայութեան հետ աշխատանքներուն մասին խօսեցաւ գրող-հրապարակախօս Մանուէլ Ադամեան, որ կարեւոր նկատեց Գեղամեանի՝ Սփիւռքի կոմիտէին մէջ կատարած աշխատանքը խորհրդային ժամանակներէն, անոր սերտ կապը սփիւռքի մտաւորականութեան հետ եւ ունեցած կարեւոր դերակատարութիւնը Հայաստանի սփիւռքի նախարարութեան մէջ:

Դերասանուհի Ժենիա Ներսիսեան եւ Ս. Գեղամեանի լոնտոնաբնակ քոյրը՝ Թամար Մինասեան կարդացին Գեղամեանի յօդուածներէն քանի մը հատը, իսկ Լոնտոնի Թահտայեան կիրակնօրեայ դպրոցի տնօրէնուհի Ռուզաննա Թաթուլեան անդրադարձաւ Ս. Գեղամեանի մանկապատանեկան ստեղծագործութիւններուն:

Խօսք առին նաեւ կարգ մը անձնաւորութիւններ, եւ գործադրուեցաւ զեղարուեստական յայտագիր:

**[www.armenianprelacykw.com](http://www.armenianprelacykw.com)**

ԱՅԼԱԶԱՆ

## Ինչո՞ւ Ներել

Փոքր տարիքէն մեր զաւակներէն կը պահանջենք, որ իրենց գործած մէկ սխալին համար ներողութիւն խնդրեն եւ կամ իրենց դէմ գործուած մէկ յանցանքին դիմաց ներողամիտ գտնուին:

Չափահաս տարիքի մենք ալ մեր կարգին պէտք է ներենք մեզ ցաւցուցած անձը, մոռնանք անսխալտ պատահարը, այլապէս կը դժուարացնենք մեր կեանքը:

Չներել՝ կը նշանակէ մեջը պահել վիրաւորանքը, դժգոհութիւնը: Ատիկա նաեւ կը նշանակէ՝ մեջը պահել ցաւը: Մշտապէս մեր ուղեղին մէջ կը պտտցնենք այդ իրադարձութիւնը՝ փոխանակ դրական բաներու վրայ կեդրոնանալու:

Ներումը առաջին հերթին մեզի կ'օգնէ: Ամբողջ իմաստը ա՛յդ է: Մենք կը մտածենք, որ ներումը կը վերաբերի դիմացինին, սակայն իրականութեան մէջ այս դժուար քայլը մեզի աւելի պէտք է: Առանց ներումի՝ մենք չենք կրնար կեանքի մէջ յառաջ երթալ, միշտ մեր հոգիին վրայ ծանր քար մը կրելու տպաւորութիւնը կ'ունենանք:



Ներումը պէտք է բոլորին համար ըլլայ, եւ ոչ թէ միայն անոնց, որոնք ներողութիւն խնդրած են մեզմէ: Այլապէս ո՞ր է ներման իմաստը: Ուժեղ մարդիկ կը ներեն նոյնիսկ անոնց, որոնք արժանի չեն: Այլապէս մեր մէջ թաքնուած վիրաւորանքը կ'արտացոլայ մեզ շրջապատող այլ մարդոց վրայ եւ ատիկա կը դառնայ բարդոյթ եւ մարդոց հանդէպ անվստահութեան պատճառ:

Միայն ներելով մենք կը հաշտուինք անցեալին հետ, որպէսզի անիկա չխանգարէ մեր ապագան: Երբ մենք մէկ կողմ կը դնենք անցեալի ցաւը, վիրաւորանքը, նոր տեղ կը բանանք նոր եւ խաղաղ զգացումներու:

Կ'արժէ մտածել այս մասին...

Հետաքրքրական խօսքեր՝ ներումի մասին.

- Տկարը չի կրնար ներել: Ներումը ուժեղներուն կը պատկանի:
- Երբ կը ներես, անցեալը չես փոխեր, սակայն վստահաբար կը փոխես ապագան:
- Սիրել՝ կը նշանակէ ներել:
- Էջը դարձնելը մոռնալ չի նշանակեր: Պարզապէս ըսել է, թէ որոշած ես ուրախ ըլլալ՝ փոխանակ վիրաւորուած զգալու...
- Ներելը ուրիշին համար չէ, որ կ'ընենք, այլ՝ մենք մեզի: Կը ներենք աւելի հանգիստ զգալու եւ յառաջ երթալու համար:

## Թելադրելի Է Երեխաներուն Աշխատիլ Սորվեցնել Կանուխ Տարիքէն

Հոգեբաններու կարծիքով, երեխաներուն ճիշդ դաստիարակութեան համար թելադրելի է անոնց աշխատիլ սորվեցնել կանուխ տարիքէն: Անոնց կարծիքով, խաղը, ուսումը եւ աշխատանքը երեխաներու զարգացման երեք կարեւոր բաղադրիչներն են: Ծնողներուն օգնել պզտիկ գործ մը կատարելով եւ անոր դիմաց չնչին վարձատրութիւն ստանալով՝ երեխան աւելի լաւ կը հասկնայ, թէ ինչպէ՛ս կառուցուած է աշխարհը եւ աւելի լաւ նախապատրաստուած կ'ըլլայ հասուն կեանքին:



Ասիկա նաեւ երեխային հնարաւորութիւն կու տայ հասկնալու, թէ կեանքի մէջ ի՛նչ դեր կը խաղայ աշխատանքը, եւ թէ որքան կարեւոր է չծուլանալը: Այլապէս երեխաները կրնան վերածուիլ ծոյլ պատանիներու եւ անյաջողակ չափահասներու:

Վերոյիշեալ հոգեբանները կարեւորութեամբ կ'ընդգծեն, որ աշխատանք ըսելով՝ երբեք պէտք չէ հասկնալ մանկական աշխատանքի շահագործումը եւ յանուն աշխատավարձի եւ ընտանիքը կերակրելու համար աշխատիլը:

Պէտք է, որ աշխատանքը երեխաներուն զարգացման մէկ մասը կազմէ եւ ոչ թէ խանգարէ անոնց զարգացումը: Աշխատանքը միջոց մը պէտք է ըլլայ երեխաներուն համար՝ ճանչնալու զիրենք շրջապատող աշխարհը, բայց անոնք պէտք է որ բաւարար ժամանակ ունենան խաղալու եւ ուսում ստանալու:

Վերջապէս, հոգեբանները կարեւորութեամբ շեշտած են, որ աշխատանքը ոչ մէկ ձեւով պէտք է վնասէ երեխաներուն մարմնական կամ հոգեկան առողջութեան կամ վիրաւորէ անոնց արժանապատուութիւնը: